

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ*

Վստահաբար կարելի է ասել, որ հայոց լեզվի դպրոցական գործող դասագրքերի հեղինակ պրոֆեսոր Ֆ.Խլղաթյանը վերջին տարիների «ամենագրախոսվող» լեզվաբաններից է: Եվ մինչ ոմանք տարբեր օրաթերթերում փորձում էին նրան անպտուղ բանավեճի մեջ ներքաշել, նա հրատարակեց իր հերթական աշխատությունը՝ «Ոճաբանական բառարանը»:

Ոճաբանության բնագավառում անուրանալի է Ֆ. Խլղաթյանի վաստակը: Գիտական շրջանակներին քաջածանոթ են լեզվի և ոճի տարբեր հարցերին նվիրված նրա ուսումնական ձեռնարկները (օրինակ՝ ոճաբանության դպրոցական դասագիրքը՝ ակադ. Գ.Ջահուկյանի հեղինակակցությամբ), մենագրությունները (օրինակ՝ «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը»), ամսագրային և հանրագիտարանային բազմաթիվ հոդվածները:

Դրանց մեջ, մեր կարծիքով, հատկապես առանձնանում է «Ոճաբանական բառարանը», որն իր տեսակի մեջ առաջինն է մեզանում: Այս բառարանն ընդգրկում է հայերեն ոճագիտական տերմինաբանությունը, ինչպես նաև հայ քերականագիտության, ճարտասանության, գրականագիտության, տեքստաբանության և հարակից այլ գիտաճյուղերում գործածված այն եզրերը, որոնք հանդիպում են ոճաբանության մեջ կամ էլ առնչվում են նրան: Հայտնի փաստ է, որ լինելով լեզվաբանական գիտաճյուղ՝ ոճաբանությունը սերտորեն առնչվում է նաև գրականագիտությանը, պոետիկային, տեքստաբանությանը, թարգմանաբանությանը (ոմանք նույնիսկ տարբերակում են լեզվաբանական ոճագիտություն և գրականագիտական ոճագիտություն): Ահա այս առումով ոճաբանական տերմինների բառարանը ժամանակին հետաքրքրեց բանասերներին առհասարակ և կարևոր դեր խաղաց հայերեն ոճաբանական տերմինաբանության մշակման և կայունացման գործում: Առ այսօր չի ասվել, որ հիշյալ բառարանը որոշակիորեն նպաստեց նաև գրականագիտական տերմինարանի համալրմանն ու հարստացմանը:

Հարկ է նշել, որ գրախոսվող «Ոճաբանական բառարանում» ներկայացված տերմինների մեջ շատ են այնպիսիք, որոնք հեղինակն է կերտել, կամ էլ առաջինն է գործածել, բացատրել, բառարանային գրանցում տվել: Հինգ տասնյակի հասնող այդ տերմինների զգալի մասը համընդհանուր ճանաչում է ստացել և գործածվում է գիտական գրականության մեջ (*դարձույթ, բանադարձում, խոսքաշար, համընդունում, առոգաբանություն, վերաբերակ, բառաշրջում, զեղասություն, երկդիմույթ, խրատախոսք, հմայախոսք* և այլն): Ի դեպ, հարկ է նշել, որ պրոֆ. Խլղաթյանը բառաստեղծական և տերմինաստեղծական անուրանալի օժտվածություն ունի: Վկա՝

*Ֆ. Խլղաթյան, «Ոճաբանական բառարան» (երկրորդ լրացված և բարեփոխված հրատարակություն), Երևան, «Ձանգակ-97» հրատարակչություն, 2000:

վերոհիշյալ կազմությունները, որոնք թե համապատասխանում են հայերենի բառակազմական օրինաչափություններին և թե լիարժեք արտահայտում են տվյալ հասկացությունը, տերմինային նշանակությունը: Միաժամանակ պահպանելով տերմինաչինական լավագույն ավանդույթները, որ ձևավորվել են հայ իրականության մեջ հունաբանական մշակութային շարժման ժամանակներից սկսած:

Ներկա բառարանը նախորդի սոսկ երկրորդ հրատարակությունը չէ. ըստ ամենայնի նորացվել, վերամշակվել, լրացվել և հարստացվել են թե՛ բառացանկը, թե բացատրական մասը: Այս անգամ մեծացվել է նաև այլալեզու տերմինների ընդգրկումը. դրանք տրվում են հայերեն տերմիններից հետո, որպեսզի օգտակար լինեն օտար լեզուներով ոճագիտական-լեզվաբանական գրականություն ընթերցողներին կամ հայերենից այլ լեզուներ թարգմանություններ կատարողներին: Բառարանի առաջին հրատարակության հունարենին, լատիներենին և ռուսերենին ավելացել են եվրոպական տարածված լեզուները (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն): Այս հանգամանքն անշուշտ բարձրացնում է բառարանի տեղեկատվական արժեքը: Հարկավոր է նշել, որ գրքի գիտական խմբագիրն է օտար լեզուների գիտակ լեզվաբան, պրոֆ. Ա.Նազարյանը:

Բառարանը կազմելիս հեղինակը հաշվի է առել թե՛ գիտաճյուղի վերջին զարգացումները, թե՛ հետազոտական սեփական նոր մշակումները:

Բառարանի պարունակած բացատրությունները մատչելի են, միաժամանակ ճշմարիտ, մասնագիտական բարձր մակարդակով՝ հիմնավորված հաջող օրինակներով: Այդ օրինակները դիպուկ ընտրվել են հիմնականում հայ դասական և ժամանակակից գեղարվեստական գրականությունից:

Վստահ ենք, որ նշված հատկանիշների շնորհիվ Ֆ. Խլրթթյանի «Ոճաբանական բառարանը» օգտակար կլինի և՛ ուսանողներին, և՛ ուսուցիչներին, և՛ լեզվաբաններին ու գրականագետներին:

Դրվատելի և արժեքավոր այս գրքում կան նաև թերություններ: Այսպես, հեղինակը հատուկ նշանակ է տալիս այն տերմինները, որ ինքն է ստեղծել ու առաջարկել: Այդպիսիներից մի քանիսը շատ ավելի վաղ են կազմվել և բառարանային գրանցում ստացել, ինչպես՝ *Նրբաբանություն*, *հայկաբանություն*: Թյուրիմացություններից խուսափելու նպատակով ճիշտ կլիներ ասել, որ դրանք ոճաբանական տերմինի նշանակությամբ առաջինը հեղինակն է կիրառել:

Որոշ վրիպակներ կան նաև այլ նշումների դեպքում, օրինակ՝ հատուկ նշաններով նշված են հնացած և օտար տերմինները: Բայց այդ նշանները բացակայում են *գաղիաբանություն*, *ֆիզուրա*, *ադապտացիա*, *ալիտերացիա* տերմինների դեպքում (դրանք թերևս տպագրական-տեխնիկական վրիպակներ են):

Ցավալի է, սակայն բացակայում են սպասելի որոշ տերմիններ: Օրինակ՝ առանձին բառահոդվածներով ներկայացված են լրիվ, բացարձակ, երանգային և այլ հոմանիշներ, սակայն բացակայում է *ոճական հոմանիշներ*-ը, որ անշուշտ կարևոր է: *Հաճախական բառարան*-ի փոխարեն պիտի լիներ *հաճախականության բառարան* և այլն:

Այս և նմանատիպ վրիպումները և բացթողումները դյուրությամբ կուղղվեն բառարանի հաջորդ հրատարակության ժամանակ: Իսկ այսօր հրապարակի վրա է օգտակար և արժեքավոր մի աշխատություն, որը կարող է դառնալ ոճաբանների գրադարանի ամենագործածական գրքերից: